ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 7. ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱԲԵԼՈՆԻ ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1

Ժամանակակիցը Նինվեի կործանման մասին.

«Վա՜յ քեզ, արյունոտ քաղաք, լի խաբեությամբ ու չդադարող կողոպուտներով: Հեծյալները սուլում են, սուրը փայլատակում է, տապարը՝ շողշողում: Սպանվածները բյուրավոր են և դիակները՝ սարեր... Նինվեն ավերված է: Ո՞վ կափսոսա նրան: Բոլորը, ովքեր լսում են քո մասին, ուրախանում են քո ճակատագրով, քանի որ ո՞վ իր վրա չի զգացել քո չարությունը»:

2

Բաբելոնը Առաջավոր Ասիայի ամենախոշոր քաղաքն էր: Այն շրջափակված էր երկու շարք պարիսպներով: Դրանց բարձրությունը 8 և 11 մետր էր, իսկ շրջագիծը՝ 8, 5 կմ: Քաղաքը ուներ բազմաթիվ դարպասներ և աշտարակներ: Քաղաքի կենտրոնում էր գտնվում գերագույն աստված Մարդուկի տաճարը: Տաճարին կից կառուցված 6-հարկանի զիկուրատը՝ ***«Բաբելոնի աշտարակը»,*** ուներ 81 մ

բարձրություն: Բաբելոնացիների հավատալիքների համաձայն, այդ աշտարակը երկիրը միացնում էր երկնքի հետ: Նրա վերին հարկը ոսկեզարդ էր և համարվում էր Մարդուկ աստծո հանգստավայրը: Այնտեղ կարող էին բարձրանալ միայն նրանք, ովքեր խոսում էին «աստծո անունից», այսինքն՝ գլխավոր քրմերը: Աշտարակի վրայից քրմերը նաև դիտում էին երկնային մարմինների շարժումը:

Քաղաքի շուկաներում կարելի էր գտնել այն բոլոր ապրանքները, որոնք կային երկրի երեսին: Բաբելոնական գործվածքները հայտնի էին ամբողջ աշխարհում: Եփրատ գետի աջ ու ձախ ափերի թաղամասերը իրար կապելու համար կառուցվել էր 123 մետր երկարությամբ քարե կամուրջ, որի վրայով միաժամանակ կարող էր անցնել երկու սայլ: Բաբելոնի կենտրոնական բոլոր փողոցները և տաճարների բակերը ասֆալտապատ էին:

Բաբելոնի ամենանշանավոր շինությունը ***«Կախովի այգիներն»*** էին: Այգիները կառուցել էր Նաբուգոդոնոսոր արքան իր սիրելի

կնոջ՝ Մարաստանցի արքայադստեր համար: Նա սովոր էր իր հայրենիքի կանաչ լեռներին ու անտառներին և շոգ ու անտառազուրկ Բաբելոնում կարոտում էր լեռնային անտառների հովին ու ստվերին: Ցանկանալով թեթևացնել հայրենիքի թախիծը՝ Բաբելոնի թագավորը որոշեց նրան նվիրել ամբողջ մի օազիս՝ որպես թե բերված Մարաստանի լեռներից:

Այգիները տնկված էին մի քանի հարկ բարձրացող հողահարթակ-

ների վրա: Այստեղ աճում էին հեռավոր երկրներից բերված բույսեր և ծառեր: Եփրատ գետից կավե խողովակներով բերված ջուրը ցայտում էր շատրվանների ձևով և ապահովում այգիների ոռոգումը: Հեռվից այգիները թվում էին օդում կախված, որից առաջացել է նրանց անվանումը:

Այդ հռչակավոր այգիները, որ դասվել են աշխարհի յոթ հրաշալիքների շարքը, տեղավորված էին չորս հարկից բաղկացած լայն հարթակի վրա: Յուրաքանչյուր հարկում կառուցված էին աղյուսից ամուր կամարներ, որոնք հենվում էին բարձր սյուների վրա: Հարկերի

հարթակները կառուցված էին հսկայական քարերից: Վերևից դրանք ծածկված էին եղեգնի շերտով և պատված ասֆալտով: Հատակը ծածկված էր կապարե թիթեղներով, որպեսզի հողի միջով ջուրը չանցներ ներքևի հարկերը: Այդ բարդ կառուցվածքով հատակի վրա լցված էր բավարար քանակությամբ բերրի հողի հաստ շերտ, որպեսզի կարողանային աճել ամենախոշոր ծառերը: Պարտեզների հարկափուլերը բարձրանում էին աստիճանաձև իրար հետ միավորված սանդուղքներով: Հզոր սյուների վրա հենված այգիները հեքիաթային գեղեցկություն ունեին: